ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-383-14.11.2013-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ միայն «վաստակավոր» կոչումն ինքնին բավարար պայման չէ ամենամյա պատվովճար սահմանելու համար: Նման կոչումներ տրվում են բազմաթիվ ոլորտների տարբեր մասնագիտություններ ունեցող անձանց իրենց ունեցած աշխատանքային հաջողությունների և վաստակի համար, ինչն ինքնին արժևորումն ու կատարած աշխատանքի վարձատրությունն է:

Ներկայացված նախագծի ընդունումը կառաջացնի լրացուցիչ բյուջետային միջոցների անհրաժեշտություն, ինչը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկ-

մանը ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված չէ:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրիվ անվանումը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես, հիշյալ հոդվածում նշված «ՀՕ-105» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-105-Ն» բառերով.

2) նախագծի 2-րդ հոդվածում նշված «հրապարակման օրվան հաջորդող ամսվա առաջին օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է պատվովճար սահմանել պատվավոր կոչումների արժանացած բոլոր քաղաքացիների համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է պատվավոր կոչումների համար ամենամսյա պատվովճարի տրմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի **բյուջետային բնագավառում** կարգավորման ազդեցության գնահատման*

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է ամենամսյա պատվովճար սահմանել ոչ միայն «Ժողովրդական», այլ նաև պատվավոր կոչման արժանացած բոլոր քաղաքացիների համար:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ վերոնշյալ Նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

Բյուջետային ծախսերի ազդեցության գնահատման մասով հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը կհանգեցնի լրացուցիչ բյուջետային ծախսերի անհրաժեշտությանը, որը նախատեսված չէ Ազգային ժողով ներկայացված ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով: Իսկ ֆինանսական գնահատականը հնարավոր չէ տալ՝ համապատասխան տվյալների բացակայության պատճառով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-383-14.11.2013-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1 . «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» 2004 թվականի հունիսի 11-ի թիվ ՀՕ-105 Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Պատվավոր կոչումների համար տրվում է ամենամսյա պատվովճար, որի կարգը եւ չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

Հիմնավորում
«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է «Վաստակավոր» պատվավոր կոչմանն արժանացած անձանց համար պատվովճար սահմանելու անհրաժեշտությամբ:

1.2.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. 2004 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է երկու պատվավոր կոչում՝ «Վաստակավոր»եւ «Ժողովրդական»(ընդ որում, վերջն կոչմանը կարող են արժանանալ բացառապես արտիստներն ու նկարիչները): Օրենքի 21-րդ հոդվածը, որը վերնագրված է «Պատվավոր կոչման համար պատվովճարը», սահմանում է, որ պատվովճար կարող է տրվել միայն «Ժողովրդական» կոչման համար: 2004 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ««Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի նշանակման եւ վճարման կարգն ու չափը սահմանելու մասին»1841-Ն թվակիր որոշման 3-րդ կետով սահմանվում է ««Ժողովրդական»պատվավոր կոչման արժանացած անձանց ամսական պատվովճար սահմանել հաշվարկային նվազագույն աշխատավարձի (1000 դրամ) քառասունապատիկի չափով»: Այնինչ, որեւէ արտոնություն «Վաստակավոր» կոչմանն արժանացած անձանց համար չի նախատեսվում, ինչը մի կողմից անարդար եւ տարբերակված մոտեցում է, մյուս կողմից արժեզրկում է «Վաստակավորի» պատվավոր կոչումը: Ավելին, անտրամաբանական է, որ երկու հավասարազոր կոչումներ, որոնք տրվում են նույն մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից, տարբերակված ձեւով են գնահատվում:

1.3.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Սույն նախագծով առաջարկվում է սահմանել, որ պատվավոր կոչումների արժանացած բոլոր քաղաքացիները ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով եւ չափի պատվովճար:

2.Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են պատվավոր կոչում ստացած քաղաքացիներին տրվող պատվովճար սահմանելու հետ կապված իրավահարաբերությունները:

3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում պատվովճար կստանան նաեւ «Վաստակավոր» կոչմանն արժանացած քաղաքացիները: